

## Լիբանանեան Լուրեր

### Պասիլի եւ Ժառանգայի Միջեւ Ակնկալուող Հանդիպումը Ընդհուպ Պիտի Չիրականանայ. Ռաաի



Մարոնիթ պատրիարք Պշարա Ռաաի Երեքշաբթի տեսակցութիւն ունեցաւ նախագահ Միշել Աունի հետ՝ Լիբանանի մէջ քրիստոնէական երկու մեծագոյն կուսակցութիւններուն միջեւ անկասելի լարուածութիւնն ու նոր կառավարութեան կազմաւորման գործընթացի անհերքելի տեղքայլը քննարկելու համար:

Հանդիպումէն ետք Ռաաի լրագրողներուն հաղորդեց, որ Ազգային ազատ հոսանք շարժումի առաջնորդ Ժարան Պասիլի եւ Լիբանանեան ուժեր կուսակցութեան առաջնորդ Սամիր Ժառանգայի միջեւ ակնկալուող հանդիպումը ընդհուպ պիտի

չկայանայ: Տեղական լրատուամիջոցներու որոշ հաղորդումներուն համաձայն՝ պատրիարք Ռաաի ցանկութիւն յայտնեց նպաստելու ԼՈ-ի եւ ԱԶՀ-ի միջեւ լարուած իրավիճակի հանգուցալուծման:

Ռաաի աւելցուց, որ ինք եւ նախագահ Աուն պայմանաւորուածութիւն ձեռք բերին ազգային միասնականութեան ամրապնդման եւ Լիբանանի մէջ առկայ խայտաբղէտութեանց պահպանման շուրջ:

Էջ 08 ►►

## Շրջանային Լուրեր

### Էրտողան Նշանակած Է Նոր Կառավարութեան Կազմը



Ռեճեփ Թայիփ Էրտողան, որ Յուլիս 9-ի երդման արարողութեամբ դարձեալ ստանձնեց Թուրքիոյ նախագահի պաշտօնը, նշանակած է նոր կառավարութեան կազմը: Ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրես»-ը՝ վկայակոչելով թրքական «Անատոլու» գործակալութիւնը, փոխնախագահ նշանակուած է Ֆուատ Օքթայը:

Արտաքին գործոց նախարարի պաշտօնին

վերանշանակուած է Մելուֆ Չաուշօղլուն, ներքին գործոց նախարարի պաշտօնին՝ Սուլէյման Սոյլուն: Նախապէս ուժաբանութեան ու բնական պաշարներու նախարարի պաշտօնը զբաղեցնող Էրտողանի փեսան՝ Պերաթ Ալպայրաքը այսուհետեւ կը զբաղեցնէ ֆինանսներու նախարարի, իսկ գինուածութեան գլխաւոր իրամասնատարակազմի նախկին պետ Յուլուսի Աքարը՝ պաշտպանութեան նախարարի պաշտօնը:

Արդարադատութեան նախարար նշանակուած է Ապտուլհամիթ Կիլը, աշխատանքի, ընկերային ծառայութիւններու եւ ընտանիքի հարցերով նախարար՝ Չեհրա Չումրուֆ Սելչուքը, շրջակայ միջավայրի ու քաղաքաշինութեան նախարար՝ Սուրադ Զուրումը, ուժաբանութեան ու բնական պաշարներու նախարար՝ Ֆաթիհ Տոնմեզը, երիտասարդութեան ու մարմնակրթութեան նախարար՝ Մեհմեթ Զասաթօղլուն, մշակոյթի ու զբօսա-

Էջ 02 ►►

## Հայրենի Լուրեր

### Հարկային Պարտաւորութիւններու Չկատարման Մասով Արդէն Իսկ Վերականգնուած Է 20 Միլիարդ 622 Միլիոն Դրամի Վնաս Կամ Չվճարուած Հարկ



ՀՀ կառավարութիւնը Յուլիս 10-ին գումարած Է հերթական նիստը, որ վարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Այս մասին, ինչպէս կը փոխան-ցէ «Արմէնփրես»-ը, կը տեղեկացնեն ՀՀ կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութիւնէն:

Մինչ նիստի մեկնարկը վարչապետը տեղեկացուցած է, որ ՀՀ կառավարութիւնը նուէր ստացած է գիրքեր «Անտարես» հրատարակչութիւնէն: «Այս ակցիան նպատակ ունի խթանել ընթերցանութիւնը Հայաստանում եւ յատկապէս կառավարութեան անդամների շրջանում: Ի հարկէ, ես ուզում եմ ասել, որ այլ հրատարակչութիւններ, եթէ ցանկանում են այսպիսի գործընթաց ունենալ, մենք հաճոյքով նրանցից նոյնպէս նուէրներ կ'ընդունենք, նաեւ նրանց անունները կը բարձրաձայնենք, որպէսզի գրահրատարակութեան եւ գրքի ընթերցանութեանը աջակցենք: Լաւ կը լինի, որ մենք նաեւ քաղաքականութիւն ունենանք այդ ամենին աջակցելու: Ուզում եմ հաւաստիացնել, որ ի հեճուկս տարածուած կարծիքի՝ Հայաստանում այսօր էլ ստեղծուում են արժեքաւոր գրական գործեր, որոնց ընթերցումը, կարծում եմ, շատ բան կը տայ բոլորիս: Յոյս ունեմ, որ մենք իսկապէս կը կարողանանք մեր աշխատանքը կազմակերպել այնպէս, որ գեղարուեստական գրականութեանը եւ ընթերցանութեանը նոյնպէս բաւարար ժամանակ տրամադրենք», - նշած է Նիկոլ Փաշինեան:

Այնուհետեւ վարչապետը անդրադարձած է ստուերային տնտեսութեան դեմ պայքարի ուղղութեամբ իրականացուող քայլերու արդիւնքներուն: «Գիտեք, որ մեր կառավարութեան ձեւաւորումից ի վեր Հայաստանում ակտիւօրէն ընթանում է կոռուպցիայի, չարաշահումների եւ ստուերային տնտեսութեան դեմ պայքար: Մենք ամփոփել ենք մի տուեալ եւ արձանագրել, որ իրաւապահ տարբեր մարմինների կողմից յարուցուած քրեական գործերի շրջանում միայն հարկային պարտաւո-

Էջ 02 ►►

Հայրենի Լուրեր

Էջ 01

Մեր Ամենակարելուր Նպատակը Ո՛չ Միայն Կանգնեցնելն Է Արտագաղթի Անիւը, Այլ Նաեւ Ետ Դարձնելը. Նիկոլ Փաշինեան

րութիւնների մասով Յուլիսի մէկի դրութեամբ հաշուարկուել, վերականգնուել է 20 մլրդ 622 մլն դրամի վնաս կամ չվճարուած հարկ, որը պետք է վճարուի: Խօսքը 42 մլն տոլարի մասին է, սա շատ կարելուր ցուցանիչ է եւ, կարծում եմ, որ մենք այս ուղղութեամբ աշխատանքը պետք է շարունակենք: Սա իրականում մէկուկէս ամսուայ ցուցանիչ է: Մամուլում հրապարակումներ կան, որ պիտո՞ճեմ այս պահի դրութեամբ այս վերադարձուած թիւը չի արտայայտուում, սակայն այստեղ ոչ մի տարօրինակ բան չկայ, եւ ես հիմա կը խնդրեմ ՊԵԿ նախագահ պարոն Անանեանին ներկայացնել, թէ ինչն է պատճառը, որ մենք այս պահի դրութեամբ պետական պիտո՞ճեմ չունենք այս 20 մլրդ դրամը եւ ունենք ընդամենը վերականգնուած, փաստացի մուտք արուած 800 մլն դրամ», - ըսած է Նիկոլ Փաշինեան:

Պետական եկամուտներու կոմիտէի նախագահ Դաւիթ Անանեանը տեղեկացուցած է, որ վերականգնուած գումարները ԱԿԾ, ՊԵԿ եւ ոստիկանութեան համատեղ ջանքերու արդիւնքն են: «Բնականաբար, քննչական եւ հետաքննչական ծառայութիւնները համագործակցել են քննչական ծառայութեան, դատախազութեան հետ, եւ ցանկանում եմ, որ սա վերագրենք հաւաքական աշխատանքի արդիւնք: Ինչ վերաբերում է Ձեր ասած թուերին, ըստ էութեան, 20 մլրդ 622 մլն-ն օր-օրի փոփոխուում է, բնականաբար այն ունի բարձրանալու միտում: Այս պահի դրութեամբ այս գումարը 73 տնտեսվարողների վարքագծի արդիւնք է, եւ մենք կարող ենք դա բաժանել 3 մասի: Ինչպէս Դուք ասացիք, 800 մլն դրամը փաստացի մուտքագրուել է պիտո՞ճեմ, մօտաւորապէս 12.7 մլրդ դրամ առաջադրուել է գանձման պետական

պիտո՞ճեմ, իսկ 7 մլրդ-ի կարգի միջոցները նախնական հաշուարկներ են, որոնք փոփոխման ենթակայ են, այսինքն քննչական գործողութիւնների ընթացքում դրանք աւելանալու միտում ունեն: Երբ ասում ենք, որ վերականգնուել է, օրինակ՝ 2.5 մլրդ դրամ, նկատի ունենք, որ օրինակ՝ «Նորֆոլկի» հաշուարկային հաշուին մուտքագրուել է համապատասխան գումար, որը վերահսկուում է ԱԿԾ եւ ՊԵԿ համապատասխան ծառայութիւնների կողմից եւ լուծարային ստուգման ակտը գրելուն պէս ակտի հիման վրայ հաշուարկային հաշուիչ գումարները կը փոխանցուեն պետական պիտո՞ճեմ: Երբ, օրինակ՝ «Նորֆոլկի» դրուագով ասում ենք, որ ունենք վերականգնում, պետք է դա այս պահին վերապահուումով ասել. վերականգնումը դեռեւս չի նշանակում պետական պիտո՞ճեմի անմիջական մուտք, նշանակում է, որ վերակազմուել է պիտո՞ճեմի հաշուարկային հաշիւ եւ մուտքագրուելու է պետական պիտո՞ճեմ ակտի առկայութեան պայմաններում, որը մենք նախատեսում ենք հրապարակել մինչեւ Յուլիսի 17-ը», - ըսած է Դաւիթ Անանեանը:

Իր հերթին, վարչապետ Փաշինեան ընդգծած է, որ ներկայացուած թիւը կը վերաբերի միայն հարկային պարտաւորութիւններուն: «Այս թիւը չի վերաբերում ապօրինի հարստացման գործերին, իւրացումներին եւ այլ կոռուպցիոն երեւոյթների հետ կապուած գործերին, որոնք նոյնպէս իրենց ծաւալներով չափազանց մեծ են: Ի հարկէ, այս պրոցեսը շարունակուելու է եւ մենք լրջագոյն գումարներ վերականգնելու ենք, պետութեանը հասցուած վնասները վերականգնելու ենք եւ, ինչպէս ասել եմ, մինչեւ վերջ ենք վերականգնելու, աննահանջ ենք վերականգնելու: Ուրախ եմ, որ

այս թեմայի շուրջ մեր իրաւապահ մարմինների փոխգործակցութեան մակարդակ ամէն օրուայ հետ աւելի արդիւնաւետ է դառնում, եւ մենք այս ճանապարհով պետք է շարժուենք: Ուզում եմ ընդգծել, որ հենց այս գումարների մասին է խօսքը, երբ ասում ենք, որ 10 մլրդ դրամ սուբվենցիաների (դրամանպաստ) ծրագրով կը յատկացնենք մարզերին: Շատ կարելուր է, որ իսկապէս այս գումարները ծախսուեն մաքսիմալ արդիւնաւետ, որպէսզի մեր ժողովուրդն արդէն իրենց համայնքներում զգայ փոփոխութիւնները», - ըսած է կառավարութեան ղեկավարը:

Շրջանային Լուրեր


Էջ 01

Էրտողան Նշանակած Է Նոր Կառավարութեան Կազմը

շրջութեան նախարար՝ Մեհմեթ Էրտողը, ազգային կրթութեան նախարար՝ Չիա Սելչուքը, առողջապահութեան նախարար՝ Ֆահրեթին Զոճան, արդիւնաբերութեան եւ արհեստագիտութեան նախարար՝ Մուսթաֆա Վարանքը, գիւղատնտեսութեան եւ անտառային տնտեսութեան նախարար՝ Պեքրի Փեքտեմիրլին, առեւտուրի նախարար՝ Ռուհսար Փեքճանը, իսկ փոխարարմիջոցներու եւ ենթակառուցուածներու նախարար՝ Ճահիթ Թուրանը:

Նախարարական նոր խորհուրդը ունի երկու կին գործիչ:

ՉՌԻ գլխաւոր հրամանատարակազմի պետի պաշտօնին Յուլուսի Աքարին փոխարինած է ցամաքային ուժերու հրամանատար Եաշար Կիլերը:



Պատմութեան Մէջ Այսօր

Նայիրի Չարեան

Նայիրի Չարեան (31 Դեկտեմբեր 1900 - 11 Յուլիս 1969, Երեւան), հայ բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, հրապարակագիր եւ թարգմանիչ: Բուն անունով Հայաստան Եղիազարեան:

Մահ է 31 Դեկտեմբեր 1900-ին Արեւմտեան Հայաստանի Վանի նահանգի Խառակոնիս գիւղը: Դժուար եղած է Չարեանի մանկութիւնը: 1915 թուականին թրջական եաթաղանէն հալածուած՝ հազարաւոր հայրենակիցներու հետ միասին Չարեանը կը գաղթէ Արեւելեան Հայաստան, ապաստան կը գտնէ Երեւանի եւ Դիլիջանի որբանոցները, ուր կը

մնայ մինչեւ 1921 թուականը եւ այդտեղ ալ կը ստանայ միջնակարգ կրթութիւն: Աւարտած է Երեւանի թեմական դպրոցը, 1927 թուականին՝ Երեւանի պետական համալսարանի պատմագրական բաժինը, 1933 թուականին՝ Լեւինկրատի արուեստագիտութեան պետական ակադեմիայի գրական բաժինը:

Գրական-հասարակական գործունեութիւն Չարեանի կեանքին մէջ յիշարժան էր Եղիշէ Չարեանցի հետ հանդիպումը, որ իր անունը փոխեց Նայիրի Չարեանի: 1926-ին լոյս տեսած է Չարեանի բանաստեղծութիւններուն առաջին ժողովածուն՝ «Ջրանցքի կապոյտ երկրում»: Բաղաքացիական պատերազմին ու Հայաստանի մէջ տեղի ունեցող ընկերային վերափոխումներուն նուիրուած են «Հրանուշը» (1925), «Նոյեմբերեան օրերին» (1926), «Ռուշանի քարափը» (1930), «Սագօ Միկիւնեան» (1935) պոեմները, «Հացաւան» (1937, վերամշկ.՝ 1949, բեմ.՝ 1980) վէպը:

Գրական առաջին քայլերը կ'ընէ որբանոց եղած ժամանակ: 1918 թուականին կը տպագրուի առաջին բանաստեղծութիւնը, իսկ 1969-ին՝ վերջին գիրքը: Չարեանին հռչակ բերին շարք մը բանաստեղծութիւնները, «Ռուշանի քարափը» (1930) պոեմը եւ «Հացաւան» (1937-1947) վէպը, իսկ հայրենական մեծ պատերազմի տարիներուն իր ստեղծագործութիւնները հայրենասիրական կրակ վառեցին ընթերցողներու սրտին մէջ: 1941-1945 թուականներուն Չարեանը հրատարակեց «Մարտակոչ» (1941), «Շիրակաց հոգով», «Վրեժ» (1942) եւ «Լսէք դարեր» (1942) ժողովածուները: Այդ շրջանի գործերէն են՝ «Չայն

հայրենական» պոեմը (1943) եւ «Արա Գեղեցիկ» դիցավիպական ողբերգութիւնը (1944), որ կը պատմէ հայոց թագաւոր Արա Գեղեցիկի եւ Ասորեստանի թագուհի Շամիրամի պայքարին մասին: Արա Գեղեցիկը, մերժելով իր հայրենիքը նուաճել ցանկացող Շամիրամի սերը, կոռի կ'ելլէ անոր բանակին դէմ եւ հերոսաբար կը զոհուի:

Չարեանի թատերական երկերէն ուշագրաւ են յետպատերազմեան տարիներուն գրուած «Աղբիւրի մօտ» (1948) եւ «Փորձադաշտ» (1950) կատակերգութիւնները: Իր յայտնի գործերէն է նաեւ «Հայերէն» բանաստեղծութիւնը՝ գրուած հայրենասիրական զգացումով:

1920-1930-ական թուականներուն Նայիրի Չարեանը եղած է շարք մը պարբերականներու պատասխանատու քարտուղար եւ խմբագիր: Անոնցմէ կարելի է յիշատակել «Գրական դիրքերում», «Գրական սերունդ» ամսագիրները: 1944-1946 թուականներուն եղած է Հայաստանի գրողներու միութեան վարչութեան նախագահը: Հետագային ընտրուած է Հայաստանի գերագոյն խորհուրդի անդամ, վարած հանրային եռանդուն գործունեութիւն: 1951-1958 թուականներուն եղած է ՀԽՍՀ ԳԽ պատգամաւոր, Խաղաղութեան պաշտպանութեան հայկական կոմիտէի նախագահ:

Հայկական թատրոնը բեմադրած է իր «Արա Գեղեցիկ», «Այրող դիմակ», «Աղբիւրի մօտ», «Փորձադաշտ», «Արտաւազդ եւ Զլեուփաթրա» տրամաները: 1980 թուականին Երեւանի Գաբրիէլ Սունդուկեանի անուան թատրոնը բեմադրած է Չարեանի «Հացաւանը»:

### Բաց նամակ Զ.Զ. Վարչապետ Պրն. Նիկոլ Փաշինեանին

Ձեզի դիմողը սաղմահայ բանաստեղծուհի Անուշ Նազգաշեանն է:

Վերջին ամիսներու քաղաքական փոփոխութիւնները հետաքրքրեց ոչ միայն մեր երկրին ու ժողովուրդին, այլեւ աշխարհը դաս առաւ, որ առանց արիւնահեղութեան ալ կարելի յեղափոխութիւն ընել եւ օտարները հիացմունքով արտայայտուեցան այդ մասին: Ի գուր չկոչուեցաւ ԹԱԻՇԵԱՅ ԵՒ ՍԻՐՈՅ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ...:

Դուք այդ յեղափոխութեան ոչ թէ հեղինակն էք կամ կազմակերպողը, ալեւ անոր Արքան:

Այո, արիւն չթափուեցաւ, սակայն իմ սիրտս արիւն կու լայ սիրելի վարչապետ այս տողերս գրելու ժամանակ:

Նախ յստակացնեմ, որ ես քաղաքականութենէ հեռու մարդ եմ, ես սիրերգակ բանաստեղծուհի մըն եմ, երկար տարիներու հայոց լեզուի, գրականութեան եւ պատմութեան ուսուցչուհի, սակայն ձեր լռութիւնը վերջերս Մայր Աթոռի դէմ կատարուող անցուդարձներուն մեծ հարցական մը դրած է ուղեղիս մէջ «Յո՞ր թրթաս Զայոց Աշխարհ»: Արդարութեան համար էր ձեր պայքարը, ժողովուրդին շահերուն համար, ազգով եւ հայրենիքով մտահոգ բարձրաստիճան քաղաքական գործիչ մը ձեզի նման, ինչպէս կրնայ չմիջամտել միամտեայ այս տհաճ դեպքերուն, ուր ինչպէս ակնյայտ է արդէն այս շարժումը ոչ թէ Ն.Ս.Օծութիւն Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսի դէմ է, այլեւ մեր Զայ Առաքելական Սուրբ Եկեղեցիին դէմ:

Յեղափոխութեան ամբողջ ընթացքին ես հայեացքս յառած Սուրբ Յակոբի գմբէթներուն աղօթեցի, որ Տերը պահապան ըլլայ առաջին քրիստոնէայ ազգիս ու հայրենիքիս եւ այս յեղափոխութենէն արեան հոտ չի գայ:

Ես հետեւեցայ ձեր բոլոր քայլերուն, հայ մօր եւ քրոջ սիրտս ուրախացաւ, յուզուեցաւ ձեր վերաբերմունքէն հանդէպ որդեկորոյս մօր, տասնամեայ աղջնակին ձեր ընդունելութենէն, բայց մանաւանդ ձեր հայրական հոգատարութիւնէն հայ զինուորին, որ կը պաշտպանէ հայրենիքն ու եկեղեցին, դեռ երկար է շարքը ձեր ազնիւ քայլերուն: Իմուրախութիւնն ու սրտի գոհունակութիւնը հասաւ իր գագաթնակէտին երբ ձեր տարեդարձին այցելեցիք եւ օրհնութիւնն ու թանկարժէք նուէր մը՝ Անետարանը ստացաք Վեհափառ Զայրապետէն:

Սակայն այս բոլորին հետ կարգ մը արտայայտութիւններ հանելուկ մնացին ինծի համար, որոնցմէ մէկը, որ «Պետութիւնն ու եկեղեցին անջատ են»: Նոյնիսկ խորհրդային տարիներուն այդպիսի արտայայտութիւն ես չեմ լսած: ՄԵՐ ՈՒԺԸ ՄԵՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ Է:

Օտարութեան մէջ հայուն հայրենիքն ու պետութիւնը եկեղեցին եղաւ: Մենք եկեղեցիով զօրաւոր զգացինք, ամուր մնացինք, հայութիւն պահեցինք, հայ քրիստոնէայ ապրեցանք:

Ապրելով ոչ քրիստոնէական երկիրներու մէջ, ոչ քրիստոնէայ լուծերու ներքեւ մենք մեր քաղաքացիի տիպար օրինակով պարտադրեցինք յարգեն մեզի եւ ոտնակոխ չ'ընեն մեր իրաւունքները: Երբ հարցեր ծագած են մանաւանդ եկեղեցիին հետ Երուսաղէմի մէջ, ոստիկանութիւնը իր պարտականութեան մէջ չէ թերացած:

Երուսաղէմի Զայոց Վանքէն Սուրբ Յարութեան Տաճար ոստիկաններ կ'առաջնորդեն եւ կը հետեւին մեր թափօրին, խուսափելու համար տհաճ պատահարներէ:

Այսօր Էջմիածինի հոգեւոր տարածքը իբր «Ներխուժողներէ» պաշտպանող ոստիկանները այլ տպաւորութիւն կը ձգեն, անոնք ոչ թէ իրենց գործը կ'ընեն, այլ՝ ամբողջովին ուրիշ հրահանգ կը կատարեն: Եթէ նոյնիսկ պետութիւնն ու եկեղեցին անջատ են, բայց չէ՞ որ Մայր Աթոռը հար-ան երկիր չէ, այլ Զայաստանի տարածքին մէջ կը գտնուի, ուրեմն պետութիւնը պարտաւոր է անոր անվտանգութիւնն ու անդորրութիւնը ապահովել:

Սիրելի Վարչապետ Զայաստանի Զանրապետութեան, եթէ միլիոն կազմող Սփիւռքը չի կրնար անտարբեր նայիլ հայ եկեղեցիին դէմ կատարուող այս վարկաբեկումին եւ խուժանութեան:

Ձեր ջերմ հրաւերը հայրենիք գալու կասկածի տակ կը դնէ արդէն մեզի, երբ կը լսենք թէ կրօնի ու հայոց պատմութեան պահերը ոչ թէ կը կըրճատուին այլ կը վերանան հայրենի դպրոցներէն:

Եկեղեցին մեր գոյատեւման հիմնաքարն է, օտար ուժերու գործակալ մասնագետներ ուզեցին ջնջել մեր պատմութիւնը Պատմաօրհնաբանի հիմնադրոյ դարէն եթէ թերորդ դար տեղափոխել փորձելով: Իսկ արդեօք մե՞նք, մե՞ր ձեռքով պիտի վերացնենք մեր պատմութիւնն ու սուրբ հաւատը...

Մենք չենք ուզեր, որ մեր զաւակները մեծնան առանց պատմութեան եւ հաւատքի, որուն պիտի յաջորդէ Զայոց Լեզուի վերացումը, կը վախնամ որ արեւմտահայերէնի նման արեւելահայերէնն ալ պիտի անցնի մեռած լեզուներու շարքին:

Մենք պետք չունինք արեւմտեան բարբերով եւ սովորութիւններով հայրենիք մը, այդ պարագային ինչու ձգենք տուն տեղ ու հետեւինք ձեր տուն կանչին երբ մենք պայքարելով այդ սովորութիւններուն ու բարբերուն դէմ մեր եկեղեցիներուն կողքին կ'ապրինք ամուր եւ հանգիստ մեր երկիրներուն մէջ ապահովագրուած բժշկութեամբ եւ կենսաթոշակով:

Կտրած են մեր լեզուն, տեղահանած են մեզի, լռութեան մատնած են մեր պատմութիւնը բայց ոչինչ կրցած է շարժել մեր անսասան եւ անկոտորում հաւատքը:

Զաւատալով եւ վստահելով ձեզի կը խնդրեմ ձեր թաւշեայ փայտիկով ընդմիջտ հեռացուցէք խանգարող ուժերը, մեր եկեղեցին տկարացնել փորձող միջամտութիւնները, մեր ժողովուրդին հաւատքին հետ խաղալ փորձողները, հեռացուցէք մեր ՍՐԲՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՄԱՅՐ ԷԶՄԻԱԾԻՆԵՆ եւ մի ձգէք փորձեն պղտորել իւրը Արագածի կատարին կախուած Լուսաւորչի Կանթեղին...

Պետութիւններ, թագաւորութիւններ, կայսրութիւններ կու գան ու կ'երթան, մեր հաւատքը փոթորիկներու դիմացած է, այս մէկուն ալ կը դիմանայ, ամբողջական ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴը պահպան է մեզի, բայց ձեր միջամտութեամբ թող վերջ գտնէ այս փոթորիկը, եթէ ոչ պետութիւնը մեղսակից պիտի համարուի պատմութեան եւ սերունդներուն առջեւ:

Յարգանքով՝  
*Դոկտ. ԱՆՈՒԸ ՆԱԳԱՇԵԱՆ*

### Տեսակետ Զայաստանը

ԼԵՐՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ  
«Չարթօնք»ի Աշխատակից



Զայաստանի գործադիր նոր իշխանութիւնը լուրջ փորձութեան դիմաց կանգնած է: Թէ՛ ներքին առումով, թէ՛ միջազգային եւ արտաքին քաղաքականութեան տեսակետէն:

Փաշինեանին ստուգելու համար կան մի քանի փորձաքարեր... առաջինը ես կը համարեմ Ամուլսարի ոսկեհանքի շահագործման հարցը: Ինչքան ալ ուզեն բացատրել եւ համոզեն Զայաստանի ժողովուրդին, որ այս նախագիծին համար մեծ ներդրում կատարուած է, աշխատանքի մեծ մասը աւարտած է ու կարելի չէ զայն կասեցնել, մէկ է, ժողովուրդի, հայրենի ու արտասահմանի բնապահականներուն համար անոնք բաւարար եւ համոզիչ պատասխաններ չեն: Զանքին մէջ տարիներ է որ նախապատրաստական աշխատանքներ կը տարուին, բայց տակաւին շահագործման փուլ չէ հասած: Մասնագետները կը պնդեն, որ պետք է ընդհուպ կասեցնել եւ ընդունիլ նիւթական վնաս՝ մօտ 300 միլիոն տոլարի չափով, քան թէ հանքի շահագործումով ապակաւուի Զայաստանի ջրային պաշարներն ու կենսոլորտը, որուն հետեւանքով կը վտանգուի սերունդներու առողջութիւնը եւ բազմահազար ժողովուրդ ստիպուած կ'ըլլայ հեռանալ այդ տարածքներէն, որ հիմա Զայաստանի մաքուր բնութիւնն է՝ Ջերմուկ կեդրոնով: Զարցը ամենալուրջ ձեւով դրուած է նոր իշխանութիւններու սեղանին: Տարածաշրջան այցելած վարչապետ Փաշինեան ըսաւ, որ իր այցը ճանաչողական բնոյթ ունի, բայց իր խօսքերուն մէջ զգացնել տուաւ, որ հնարաւորութիւն չունի այդ նախագիծը կասեցնելու: Ի վերջոյ, հանքին մէջ շահառու կողմ են բրիտանական ընկերութիւնն ու Զայաստանի մէջ բարեգործութեամբ զբաղող մի քանի յայտնիներ, եւ կ'ըսուի, որ Ամուլսարի ոսկեհանքի շահագործումի պայմանագիրի կնքահայրն է Զայաստանի ներկայ նախագահ Արմէն Սարգսեան: Նոր իշխանութիւններուն համար կարելոր փորձաքար է Ամուլսարը: Փաշինեանը կը յաջողի՞ դիմադրել այս հսկայ ուժերու ճնշումին, եւ նորերը ինչքանով հետաքրքրուած են Զայաստանի համար կենսական այս հարցով: Ատիկա ցոյց կու տայ մօտ ապագան:

Մոսկուա այցելու ժամանակ նոր իշխանութիւնները միշտ խօսած են Զայաստան-Ռուսաստան ռազմավարական գործակցութեան ու կնքուած պայմանագիրներուն հաւատարիմ մնալու՝ Զայաստանի նոր իշխանութիւններու քաղաքական ուղղութեան մասին, բայց, ըստ երեւոյթի, ռուսական կողմին չեն բաւարարեր այս խոստումները: Անոնք մէկ անգամ չէ, որ յայտնած են իրենց դժգոհութիւնը Զայաստանի մէջ նոր անձնակազմեր

# ԶԱՐԹՈՆԵՐ ՍՓՈՐ

## Շաբաթական Յաւելում



### Ֆուտպոլ

#### Աշխարհի Բաժակի Մրցաշարը Կիսաւարտական Հանգրուան Ֆրանսա - Պելճիքա Ֆրանսա Ապահովեց Աւարտականի Տոմարը



Աշխարհի ֆուտպոլի բաժակի մրցաշարի կիսաւարտական հանգրուանի առաջին մրցումը տեղի ունեցաւ Սենթ Փետրոսպուրկ քաղաքի մարզադաշտին վրայ, ուր մրցեցան Ֆրանսայի եւ Պելճիքայի հաւաքականները: Մրցումը սկսաւ հաւասարակշռուած ընթացքով, սակայն պելճիքացիները կամաց-կամաց սկսան աւելի արդիւնաւետ յարձակումներ գործել մանաւանդ աչ կողմէն, ուր Հազար եւ Շատլի օրուան աստղերն էր: Անոնք փոխանցումներով կամ ուղղակի հարուածներով քանի մը անգամ վտանգեցին ֆրանսական դարպասը, ուր բերդապահ Լորիս կը գործէր անվրէպ: Այս ֆրանսացիները իրենք ալ սկսան վտանգել պելճիքական դարպասը մանաւանդ Մպափիէի, Փավարի, Կրիզմանի եւ Ժիրուի միջոցով, սակայն ապարդիւն: Առաջին կիսախաղը աւարտեցաւ առանց կոլերու: Երկրորդ կիսախաղին սկիզբը ֆրանսացիները աշխուժացուցին իրենց յառաջապահ օղակը: 51-րդ վայրկեանին Ֆրանսայի հաւաքականը ստացաւ անկիւնային հարուածի իրաւունք եւ Ումթիթի Կրիզմանի օդային փոխանցումը գլխու հարուածով գետնէն Պելճիքայի բերդին մէջ: Պելճիքայի հաւաքականէն Մերթենս փոխարինեց Մուսա Տեմպէլէն: Պելճիքացիները սկսան ճնշել հաւասարելու համար: 80-րդ վայրկեանին Զարրասքո փոխարինեց Ֆելայիսին յառաջապահ օղակը աւելի աշխուժացնելու համար: Իսկ 90-րդ վայրկեանին Պաթշուայի փոխարինեց Շատլին: Ֆրանսան կրցաւ չեզոքացնել Լուքաքուն եւ Պելճիքայի օդային փոխանցումները: Այս էր ձեւը յաղթելու Պելճիքային: Մրցումը աւարտեցաւ Ֆրանսայի 1-0 հաշիւով յաղթանակով եւ խումբը հասաւ աշխարհի բաժակի աւարտական հանգրուան, ուր պիտի մրցի Խրուաթիա - Անգլիա մրցումի յաղթողին դէմ:

### Քառորդ Աւարտական Հանգրուան

#### Ֆրանսա - Ուրուկուէյ Ֆրանսա Ապահովեց Կիսաւարտականի Տոմարը

Աշխարհի բաժակի մրցաշարի քառորդ աւարտական հանգրուանի առաջին մրցումը տեղի ունեցաւ Նիժնի Նովկորոտ քաղաքի մարզադաշտին վրայ, ուր մրցեցան Ֆրանսայի եւ Ուրուկուէյի հաւաքականները: Զավանի բացակայութիւնը Ուրուկուէյի հաւաքականէն վնասուածքի պատճառով իր ժխտական ազդեցութիւնը ունեցաւ խումբին վրայ: Մրցումին սկսան տիրապետել ֆրանսացիները եւ 40-րդ վայրկեանին Վարան նշանակեց Ֆրանսայի առաջին կոլը Կրիզմանի ազատ հարուածէն օգտուելով: Ուրուկուէյցիները շատ փորձեցին փոխել մրցումին հաշիւը, սակայն հանդիպեցան ֆրանսացի պաշտպաններուն եւ բերդապահ Լորիսի գերազանց խաղին: Երկրորդ կիսախաղի 61-րդ վայրկեանին Թոլիսօ փոխանցեց Կրիզմանին, որուն հարուածը չգտնուեցաւ Ուրուկուէյի բերդապահ Մուլերայի կողմէ եւ հաշիւը դարձաւ 2-0: Մրցումը այդ հաշիւով ալ աւարտեցաւ եւ Ֆրանսա հասաւ կիսաւարտական հանգրուան:

### Պելճիքա - Պրագիլ Պրագիլ Չիջեցաւ

Աշխարհի բաժակի մրցաշարի քառորդ աւարտական հանգրուանի երկրորդ մրցումը տեղի ունեցաւ Զազան քաղաքի մարզադաշտին վրայ, ուր

մրցեցան Պրագիլի եւ Պելճիքայի հաւաքականները: Մրցումը ուներ հաւասարակշռուած ընթացք, սակայն պելճիքացիները սկսան ցոյց տալ իրենց արդիւնաւետ խաղը մանաւանդ հակայարձակումներու ընթացքին: 13-րդ վայրկեանին Ֆելայիսիի անկիւնայինը դպաւ Ֆերնանտիսիոյ ուսին եւ յայտնուեցաւ Պրագիլի բերդին մէջ: 31-րդ վայրկեանին հակայարձակումի մը ընթացքին Տէ Պրոյն գեղեցիկ փոխանցում մը ստացաւ Լուքաքույէն եւ տուգանային հրապարակի եզրէն հարուածեց ձախով ու նշանակեց ձախ անկիւնին մէջ: Երկրորդ կիսախաղին Պրագիլ Վիլիանը փոխարինեց Ռոպերթօ Ֆիրմինոյով, Կապրիէլ Խեսուսը Տուկլաս Զոսթայով եւ Փաուլինիօս Ռենաթօ Աուկուսթոյով եւ այս Աուկուսթօս է որ 76-րդ վայրկեանին Զուրինիոյի օդային փոխանցումը գլխու գեղեցիկ հարուածով մը կոլի վերածեց: Հաշիւը դարձաւ 2-1: Պրագիլցիներուն կը պակսէր արդիւնաւետութիւնը եւ Պելճիքայի բերդապահ Զուրթուա միշտ կը գտնուէր իր բարձրութեան վրայ: Մրցումը աւարտեցաւ Պելճիքայի 2-1 հաշիւով յաղթանակով: Կիսաւարտական հանգրուանին պիտի մրցին Ֆրանսան եւ Պելճիքան:

### Անգլիա - Շուէտ Անգլիա Հասաւ Կիսաւարտական

Ֆուտպոլի աշխարհի բաժակի մրցաշարի քառորդ աւարտական հանգրուանի երրորդ մրցումը տեղի ունեցաւ Սամարա քաղաքի մարզադաշտին վրայ, ուր մրցեցան Անգլիոյ եւ Շուէտի հաւաքականները: Շուէտի հաւաքականէն կը բացակայէր փորձառու պաշտպան Լասթիկը: Մրցումը սկսաւ հաւասարակշռուած ընթացքով, սակայն կամաց-կամաց անգլիացիներուն առաւելութիւնը սկսաւ յայտնի դառնալ մանաւանդ անկիւնային հարուածներու թիւին մէջ: 30-րդ վայրկեանին Մակուայր իր Եանկէն ստացած օդային փոխանցումը գլխու հարուածով կոլի վերածեց: Երկրորդ կիսախաղի 58-րդ վայրկեանին Նոյնպիսի օդային փոխանցում մը ստացաւ Ալլին Լինկարտէն եւ դարձեալ գլխու հարուածով կոլի վերածեց: Շուէտ Ֆորսպըրկը փոխարինեց Օլսընով, Թոյվոնէնը Կիտթեթիով եւ Զրաֆթը Եանսընով, սակայն ապարդիւն: Մրցումը աւարտեցաւ Անգլիոյ 2-0 հաշիւով յաղթանակով եւ խումբը 28 տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով հասաւ կիսաւարտական հանգրուան:

### Խրուաթիա - Ռուսիա Ռուսերը Հեռացան Հայարտօրէն

Աշխարհի բաժակի մրցաշարի քառորդ աւարտական հանգրուանի վերջին՝ չորրորդ մրցումը տեղի ունեցաւ Սոչի քաղաքի «Օլիմպիյսքիյ Սթատիօն Ֆիշթ» մարզադաշտին վրայ, ուր մրցեցան Ռուսիոյ եւ Խրուաթիոյ հաւաքականները: Ռուսիոյ կողմէ կը բացակայէր փորձառու պաշտպան Ժիրքովը: Մրցումը ուներ հաւասարակշռուած ընթացք, սակայն սկիզբը ռուսերը աւելի արդիւնաւետ ձեւով գործեցին եւ 31-րդ վայրկեանին Չերիշչէ Ցիուպայէն ստացած փոխանցումը գեղեցիկ կոլի վերածեց: Խրուաթները չուշացան եւ 39-րդ վայրկեանին Զրամարիչ նշանակեց հաւասարութեան կոլը, Մանժուքիչի փոխանցումէն օգտուելով: Մրցումի հիմնական ժամանակին խումբերը փոխանակեցին յարձակումներ, սակայն արդիւնքը փոխել կարելի չէր: Երոխին փոխարինեց Սամետովը, Սմոլով փոխարինեց Չերիշչէն, Կազիսքիյ փոխարինեց Ցիուպան, իսկ երկարաձգումին Ցակոյեւ փոխարինեց Կոլովինը: Մրցումի երկարաձգուած ժամանակի 100-րդ վայրկեանին խրուաթ Վիտա հաշիւը դարձուց 2-1, Մոտրիչի փոխանցումէն օգտուելով: Ռուսերը պատասխանեցին 115-րդ վայրկեանին Ֆերնանտէշի միջոցով, որ փոխանցում ստացած էր Ցակոյեւէն: Մրցումի հիմնական եւ երկարաձգուած ժամանակները աւարտեցան 2-2 հաւասար հաշիւով: Դիմուեցաւ հինգական տուգանային հարուածներու, ուր խրուաթները յաղթեցին 4-3 հաշիւով եւ անցան կիսաւարտական հանգրուան: Կիսաւարտական հանգրուանին պիտի մրցին Անգլիան եւ Խրուաթիան: Այսպիսով վերջ գտաւ Ռուսիոյ խումբին ճամբորդութիւնը: Խումբ մը, որ հակառակ սպասուածին շատ փայլուն արդիւնքներ արձանագրեց շնորհիւ իր խմբային ոգիին եւ համակիրներու աջակցութեան:

### Յաջորդ Օրերու Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել յաջորդ օրերու մրցումներու յայտագիրը:  
**Չորեքշաբթի 11 Յուլիս 2018**  
**ԱՇԽԱՐՀԻ ԲԱԺԱԿԻ ԿԻՍԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ**

ԶԱՐԹՕՆԵՐ ՍՓՈՐ
Շաբաթական Յաւելում

Ժամը 21:00 Խրուաթիա - Անգլիա
ԶԵՄՓԻՆՆԵՆԸ ԼԻԿԻ Ա.ՆԱԽԱՊԱՏՐ.ՅԱՆՎՈՐՈՒՄՆԻ ԵՐԹ
Ժամը 17:00 Ասթանա (Ղազախ.) - Սուրբիտքա (Մոնթենեգրո)
Ժամը 19:00 Սփարթաքս Եուրոպ. (Լաթ.) - Յրվենա Չվեգտա (Սերպիա)
Ժամը 20:00 Լուտոկորեց (Պուլկարիա) - Զրուգէյտըրգ (Յիւս.Իրլանտա)
Ժամը 21:00 Օլիմպիյա (Սլովեն.) - Զարապաղ (Ատրպ.)
Ժամը 23:00 Վալիբոլ (Իսլանտա) - Ռոզընպորկ (Նորվեգիա)

ԻՐՈՐԱՅ ԼԻԿԻ Ա.ՆԱԽԱՊԱՏՐ.ՅԱՆՎՈՐՈՒՄՆԻ ԵՐԹ
Ժամը 16:30 Բանանց (Յայ.) - Սարայեվո (Պոսնիա Յերց.)
Պիտել «Շանթ» կայանէն
Ժամը 18:30 Ռապոթնիչքի (Մակեդ.) - Յոնվետ (Յունգ.)
Ժամը 18:45 Վատուգ (Լիխթ.) - Լեւսքի Սոֆիա (Պուլկ.)
Ժամը 19:00 Ֆոլա Է2 (Լիւքս.) - Փրիշթինա (Զոստվո)
Ժամը 21:45 Կլենեյվըն (Յիւս.Իրլ.) - Մոլտե (Նորվեգիա)

ԹԵՆԻՍԻ ՈՒՍՊՈՐՏՆԵՐԻ ՄՐՑԱՎԱՅՆԻ 1/4-ՐԴ ԱՄԱՐՏ.ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 13:00-Էն սկսեալ «beinsports» կայանէն
ԳԵՇԵԼԱՐՇԱԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱՅՆԻ 5-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 13:40-Էն սկսեալ «eurosport» եւ «beinsports» կայաններէն
- Յինգշաբթի 12 Յուլիս 2018

ԻՐՈՐԱՅ ԼԻԿԻ Ա.ՆԱԽԱՊԱՏՐ.ՅԱՆՎՈՐՈՒՄՆԻ ԵՐԹ
Ժամը 17:00 Փինիկ (Յայ.) - Վարտար Սքոփիէ (Մակեդ.)
Ժամը 17:45 Վենթսփիլզ (Լաթվիա) - Լուֆթիոթարի (Ալպանիա)
Ժամը 18:00 Զիխուրա (Վրաստ.) - Պեյթար Երուսաղէմ (Իսր.)
Ժամը 18:30 Փարթիզան Թիրանա (Ալպ.) - Մարիպոր (Սլովեն.)
Ժամը 19:00 Լիեպայա (Լաթվիա) - Յաքըն (Շուէտ)
Ժամը 20:00 Տերրի Սիթի (Յիւս.Իրլ.) - Տիւնամո Միլսք (Պելառ.)
Ժամը 20:45 ԲԿՄԱ Սոֆիա (Պուլկ.) - Ռիկա (Լաթվիա)
Ժամը 21:00 Էնկորտանի (Աստորրա) - Կայրաթ (Ղազախ.)
Ժամը 21:15 Ռուտար (Մոնթեն.) - Փարթիզան Պելկրատ (Սերպ.)
Ժամը 21:30 Պուտուքուսթ (Մոնթեն.) - Թրենչին (Սլովակ.)
Ժամը 21:45 Ռեյնըրգ (Սկովտ.) - Շքուփի (Մակեդ.)
Ժամը 21:45 Լեյա Փոզնան (Լեհ.) - Գանձասար Կապան (Յայ.)
Ժամը 22:00 Տի Էյ Սի (Սլովակ.) - Տիւնամո Թիֆլիս (Վրաստ.)
Ժամը 22:00 Ռատնիչքի Նիշ (Սերպ.) - Կզիրա Եուն. (Մալթա)
Ժամը 23:00 Սթիարնան (Իսլ.) - Նեոմմէ Զալիու (Էսթ.)

ԹԵՆԻՍԻ ՈՒՍՊՈՐՏՆԵՐԻ ՄՐՑԱՎ. ԿԻՆԵՐՈՒ ԿԻՍԱՄԱՐՏ.ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 13:00-Էն սկսեալ «beinsports» կայանէն
ԳԵՇԵԼԱՐՇԱԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱՅՆԻ 6-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 14:25-Էն սկսեալ «eurosport» եւ «beinsports» կայաններէն
- Ուրբաթ 13 Յուլիս 2018

ԹԵՆԻՍԻ ՈՒՍՊՈՐՏՆԵՐԻ ՄՐՑԱՎ. ՏՂՈՑ ԿԻՍԱՄԱՐՏ.ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 13:00-Էն սկսեալ «beinsports» կայանէն
ԳԵՇԵԼԱՐՇԱԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱՅՆԻ 7-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 13:20-Էն սկսեալ «eurosport» եւ «beinsports» կայաններէն
ԱԹԵԼԹԻՉՄԻ ԱՂԱՄԱՆԴԵ ԼԻԿԱՅԻ 9-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ-ՈԱՊԱԾ
Ժամը 21:00-Էն սկսեալ «beinsports» կայանէն

- Շաբաթ 14 Յուլիս 2018
ԱՇԵԱՐՅԻ ԲԱԺԱԿԻ 3-ՐԴ ԴԻՐՔԻ ՄՐՑՈՒՄ
Ժամը 17:00 Պելճիքա - Խրուաթիա կամ Անգլիա
ԹԵՆԻՍԻ ՈՒՍՊՈՐՏՆԵՐԻ ՄՐՑԱՎ. ԿԻՆԵՐՈՒ ԱՄԱՐՏ.ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 15:00-Էն սկսեալ «beinsports» կայանէն

ԳԵՇԵԼԱՐՇԱԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱՅՆԻ 8-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 12:50-Էն սկսեալ eurosport եւ beinsports կայաններէն
- Կիրակի 15 Յուլիս 2018
ԱՇԵԱՐՅԻ ԲԱԺԱԿԻ ԱՄԱՐՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ
Ժամը 18:00 Ֆրանսա - Խրուաթիա կամ Անգլիա

ԹԵՆԻՍԻ ՈՒՍՊՈՐՏՆԵՐԻ ՄՐՑԱՎ. ՏՂՈՑ ԱՄԱՐՏ.ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 15:00-Էն սկսեալ «beinsports» կայանէն
ԳԵՇԵԼԱՐՇԱԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱՎԱՅՆԻ 9-ՐԴ ՅԱՆՎՈՐՈՒՄ
Ժամը 13:50-Էն սկսեալ eurosport եւ beinsports կայաններէն

Պասքեթպոլ

Եւրոպայի Ախոյեանութիւն

Յայաստանի Մրցակիցները Յայտնի Են

Յայաստանի պասքեթպոլի հաւաքականի Եւրոպայի ախոյեանութեան 2-րդ փուլի մրցակիցները յայտնի են: Դ.խմբակին մէջ Յայաստանին պիտի

միանան Բրիտանիոյ եւ Աւստրիոյ պասքեթպոլիստները: Խումբերը իրարու դէմ պիտի մրցին երթ ու դարձի դրութեամբ: Յաջորդ հանգրուան կը հասնի խմբակին ախոյեանը: Մրցումները պիտի սկսին Սեպտեմբերին:

Յայաստանի Հաւաքականը Դրամական Հարց Ունի

«Արմենփրես»-Յայաստանի պասքեթպոլի հաւաքականի Եւրոպայի ախոյեանութեան արշաւը կրնայ վերջ գտնել: Այս ահազանգը հնչեցուց պասքեթպոլի Յայաստանի ֆետերասիոնի փոխնախագահ Արա Պողոսեանը: Պետութեան կողմէ յատկացուած պիւտճէն բաւարար չէ հաւաքականին ծախքը հոգալու համար: Յաւելեալ ֆինանսաւորում չկատարուելու պարագային, հաւաքականը կրնայ չմասնակցիլ Եւրոպայի ախոյեանութեան գտումի յաջորդ փուլին կամ մասնակցի միայն Յայաստանի մէջ ապրող մարզիկներով:

Այս քայլը պիտի տկարացնէ հաւաքականին ուժը: Յայաստանի պասքեթպոլի հաւաքականը հասած է Եւրոպայի մակարդակով միջակէն վեր մակարդակի: Յետքայլ կատարելը մեղք է մեր երկրին եւ պասքեթպոլի համակիրներուն համար:

Թենիս
Ուիմպլտընի Մրցաշարը

Խաչանով Հասաւ Վերջին 16-ի Հանգրուան



Այս տարուան թենիսի երրորդ «Մեծ Սաղաւարտ»ի մրցաշարը՝ Ուիմպլտընի մրցաշարը սկսած է արդէն: Վերջին 128 մարզիկներու հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Կ.Խաչանով - Տ.Ֆերեր 6-1, 7-6 թպ 7-3, 3-6, 7-5
- Մ.Պաղտաթիս - Տ.Թիմ (7) 6-4, 7-5, 2-0 եւ Թիմ քաշուեցաւ
- Մ.Էպտըն - Տ.Կոֆէն (10) 6-4, 6-3, 6-4

Վերջին 64-ի հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ռ.Ֆետերեր (1) - Լ.Լացքո 6-4, 6-4, 6-1
- Կ.Խաչանով - Մ.Պաղտաթիս 6-3, 6-4, 3-6, 6-7 թպ 4-7, 7-5
- Ռ.Նատալ (2) - Մ.Զուքուշքին 6-4, 6-3, 6-4
- Կ.Փելլա - Մ.Զիլիչ (3) 3-6, 1-6, 6-4, 7-6 թպ 7-3, 7-5
- Ն.Ճոքովիչ (12) - Յ.Չեպայոս 6-1, 6-2, 6-3

Վերջին 32-ի հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները-փակագիծերու մէջ մարզիկին դասաւորումը.

- Կ.Խաչանով - Ֆ.Թիաֆո 4-6, 4-6, 7-6 թպ 7-3, 6-2, 6-1
- Ռ.Ֆետերեր (1) - Ե.Շթրուֆ 6-3, 7-5, 6-2
- Ն.Ճոքովիչ (12) - Զ.Էտմընտ (21) 4-6, 6-3, 6-2, 6-4
- Ռ.Նատալ (2) - Ա.Տէ Միւնաուր 6-1, 6-2, 6-4
- Է.Կիլկալիս - Ա.Չվերել (4) 7-6 թպ 7-2, 4-6, 5-7, 6-3, 6-0
- Խ.Տէլ Փոթթո (5) - Պ.Փեր 6-4, 7-6 թպ 7-4, 6-3

Իսկ կիներու մրցաշարի ամենամեծ անակնկալն էր թիւ 24 դասուած ռուս Մարիա Շարափովայի պարտութիւնը ռուս երիտասարդ մարզիկուհի Վիթալիա Տիաչենքոյէն 6-7 թպ 3-7, 7-6 թպ 7-3, 4-6 հաշիւով: Թիւ 8 դասուած չեխ Փեթրա Զվիթովա պարտուեցաւ չիլիացու պելառուս Սասնովիչէն 4-6, 6-4, 0-6 հաշիւով:

Վերջին 64-ի հանգրուանին կիներու մրցաշարին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Է.Մաքարովա - Զ.Վոզնիաքի (2) 6-4, 1-6, 7-5
- Զ.Փլիշքովա (7) - Վ.Ազարենքա 6-3, 6-3
- Ա.Վան Ուլթալանք - Կ.Մուկուրուգա (3) 5-7, 6-2, 6-1
- Տ.Զիպուլքովա - Ե.Զոնթա (22) 6-3, 6-4

Վերջին 32-ի հանգրուանին կիներու մրցաշարին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Ս.Ուիլիլմս (25) - Զ.Սլատենովիչ 7-5, 7-6 թպ 7-2
- Զ.Պերթենս (20) - Վ.Ուիլիլմս (9) 6-2, 6-7 թպ 5-7, 8-6
- Ս.Յիլե - Ս.Յալէփ (1) 3-6, 6-4, 7-5
- Ե.Օսթափենքո (12) - Վ.Տիաչենքո 6-0, 6-4

## Հայ ժողովրդական Կուսակցության Ղեկավար Միքայել Պապաճանեանի Հասարակական-Քաղաքական Գործունեությունը

Այնուհետև ներկայացնելով Դաշնակցությանը մեկուսացնելու եւ այդ նպատակով հայ բոլոր հոսանքներից բաղկացած միջկուսակցական մարմին ստեղծելու ՅԺԿի փորձերը, հունդկարեանը նշում է, որ դրա ոգին Պապաճանեանն էր[13]:

Հիմնահարցի առանձին ենթահարցերի վերաբերելով ուշագրաւ փաստեր ու վկայություններ են պարունակում ՀՀ վարչապետեր Սիմոն Վրացեանի[14] եւ Ալեքսանտր Խատիսեանի աշխատությունները:

Վրացեանը իր յուշագրությունում անդրադարձել է Հայաստանի Հանրապետության կառավարության ձեւաւորման հիմնախնդրին, այդ թուում նաեւ ՅԺԿ եւ նրա առաջնորդ Պապաճանեանի կեցածքին ու գործելակերպին:

Վրացեանը ներկայացրել է հանրապետության կառավարության կազմաւորման դժուարին գործընթացը, մեծ տեղ է տուել միջկուսակցական բանավեճերին, որոնց հիմնական պատճառն ըստ նրա՝ Ժողովրդական Կուսակցության ձգտումն էր ՅԺԿ-ին հեռացնել ասպարեզից եւ հասնել իշխանության: Նա գրում է. «Ժողովրդական Կուսակցությունը, Մ. Պապաճանեանի գլխաւորութեամբ, կտրականապէս մերժեց Զաջազունիի առաջարկը՝ մտնելու նախարարութեան մէջ: Ժողովրդականները բաց արին կատարի պայքար ՀՀ Դաշնակցության դէմ՝ պահանջելով, որ սա քաշուի ասպարեզից, եւ իշխանությունը յանձնուի իրենց»[15]:

Կառավարման համակարգի ձեւաւորման կարեւոր քայլերից մէկը 1918 Նոյեմբերի սկզբին կոալիցիոն կառավարության ձեւաւորումն էր, որի կազմի մէջ մտան ՅԺԿ-ի եւ ՅԺԿ-ի ներկայացուցիչները: Ներկայացնելով այդ կառավարության ձեւաւորման բանակցությունները եւ կազմաւորումը, Վրացեանը նշում է, որ կառավարությունը «բաւական ուժեղ կամք ուներ», միաժամանակ աւելացնում է, որ այն հասարակութեան կողմից ընդունուեց իբրեւ մի քայլ դեպի աջ, զիջում բուրժուական խաւերին[16]:

Կոալիցիոն կառավարության հետ կապուած յոյսերը չիրականացան, շարունակում է Վրացեանը, շուտով սկսեց ժողովրդական նախարարների փախուստը Երեւանից, ուր կեանքի պայամները շատ էին ծանր[17]:

Խատիսեանը իր յուշագրությունում անդրադարձել է 1918-ին Կ. Պոլիս մեկնած ՀՀ պատուիրակության, որի անդամ էր Պապաճանեանը, մանրամասն գործունեութեանը, նշել, որ պատուիրակության անդամների միջեւ կար դերերի բաժանում, սակայն ով ինչ դեր էր կատարում, չի ներկայացրել[18]:

Թեմային առնչուող մի շարք հարցեր արծարծը.....

[13] Նոյն, էջ 93:  
[14] Վրացեան Սիմոն Ղազարի (1882-1969), ՀՀԿ գործիչ: Եղել է Հայաստանի առաջին Հանրապետության գիւղատնտեսութեան եւ պետական գոյքի, ինչպէս նաեւ աշխատանքի նախարար ու 1920 Նոյեմբերին՝ ՀՀ չորրորդ վարչապետը:  
[15] Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետություն, Հրատ. Հ.Յ.Դ. Ամերիկայի Կ.Կ., Փարիզ, 1928, էջ 156:  
[16] Նոյն, էջ 174:  
[17] Նոյն, էջ 174-175:  
[18] Ա. Խատիսեան, Հայաստանի Հանրապետության Ծագումն ու Չարագումը, Պէյրուս, Բ. տիպ, «Համազգային» տպարան, 1968, էջ 101:  
[19] Գ. Գալոյեան, Հայաստանը եւ Մեծ Տէրութիւնները 1917-1923 թթ., Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատ., 1999:  
[20] Հրանդ Աւետիսեան, Հայկական Հարցը 1918 թ., Երեւան, Բարձրագոյն Դպրոց, 1997:  
[21] Կ. Դալլաքեան, Ռամկավար Ազատական Կուսակցության Պատմություն (1921-1940 թթ.), Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատ., 1999:  
[22] Կաւկասկոյէ Սլովո (Кавказское Слово) - ամէնօրեայ թերթ, 16 Սեպտեմբեր 1914-17 Դեկտեմբեր 1918, Թիֆլիս:  
[23] Մշակ - Գրական եւ քաղաքական շաբաթաթերթ, Թիֆլիս: Առաջին խմբագիրն ու հրատարակիչն է Գրիգոր Արծրունին:  
[24] Տրապիգոնի բանակցություններ - հաշտութեան բանակցություններ Անդրկովկասեան Սեյմի պատուիրակութեան եւ Թուրքիայի պատուիրակութեան միջեւ: Տեղի է ունեցել 1918 Մարտի 14-ին, Անդրկովկասում գերմանա-թուրքական յարձակման պայմաններում:  
[25] Ա. Յակոբեան, Հայաստանի Խորհրդարանը եւ Քաղաքական Կուսակցությունները, Երեւան, Հ.Յ.Դաշնակցութիւն Հրատ., 2005, էջ 47:

**Կը շարունակենք «Չարթօնք»ի մեր սիրելի ընթերցողներուն հրամցելի Հայաստանի Հանրապետութեան Գիտություններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի Թեկնածուականի համար ներկայացուած թեզ մը՝ նուիրուած Հայ ժողովրդական Կուսակցութեան հիմնադիրներէն, Ի. դարասկիզբի հայ քաղաքական փայլուն դէմք, պետական գործիչ Միքայել Պապաճանեանի 1900-ականներէն մինչեւ 1920-ականներու աւարտը երկարող ժամանակահատուածի կենսագործունեութեան:**

**Այս ժամանակաշրջանը կը զուգահիշի հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան ամենախառն, ամենաճակատագրական հանգրուանին՝ իր յոյսերով ու հիասթափություններով, խոստումներով ու խաբէութիւններով, պարտություններով ու յաջողութիւններով յատկանշուող եւ իրար խաչաձեւող ու միահիւստող վերիվայրումներով:**

**Թեզը հետազոտութիւնն է Հայաստանի Հանրապետութեան Ազգային Արխիւի վաստակաշատ արխիւագետ Գոհար Աւագեանի, որ պատմական գիտություններու թեկնածուի գիտական**

**աստիճանի ներկայացուցած է այս ուսումնասիրությունը 2009-ին, գիտական ղեկավար ունենալով դոկտոր փրոֆէսոր Հ.Ս. Յարութիւնեանը:**

**Հաճելի ընթերցում բարեմաղթելով, սիրելի ընթերցողներուն ուշադրութիւնը կը հրաւիրենք նիւթին պատմական ժամանակաշրջանին՝ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան հարիւրամեակի այս օրերուն, ընդգծելով որ հարիւրամեակ մը առաջ մեծ երկունքէ ետք ծնունդ առած Հայաստանի առաջին Հանրապետութեան այդ դժնդակ օրերուն, անոր նախորդած կովկասահայ քաղաքական վերիվայրումներուն եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան յաջորդած սփիւռքահայ առաջին տասնամեակի քաղաքական խառնիճադանջին պետք է նայիլ եւ գնահատել սթափ, տեսնել կարմիր թելի պէս անցնող պատմաքաղաքական տրամաբանութիւնը, պետական հասուն բանականութիւնը, քաղաքական ճգնաժամերուն եւ մարտահրաւերներուն նայելու առարկայական սառնասրտութեամբ, գուցէ եւ տեսնելու մերօրեայ զուգահեռներ, եւ անպայման քաղել համապատասխան իմաստուն դասեր:**

«Խմբ.»

ասպարեզներում:

Յակոբեանը ներկայացրել է ՀՀԿ-ի եւ ՅԺԿ-ի միջեւ հակամարտությունը Զաջազունու կառավարության ձեւաւորման ժամանակ, նշելով, որ հակամարտությունը այնքան բացայայտ ու սկզբունքային բնույթ էր ստացել, որ դրան անդրադարձել է մինչեւ իսկ ռուսալեզու Կաւկասկոյէ Սլովո-ն[22]: Թերթը անտեղի էր համարում ժողովրդականների մեղադրանքները Դաշնակցության հասցեին, որովհետեւ ըստ նրա՝ աշխարհամարտի տարիներին Մշակ-ը[23] եւ նրա իրաւայաջորդ ժողովրդականները չէն ունեցել յստակօրէն արտայայտուած ինքնուրոյն ազգային քաղաքական ուղեգիծ եւ գրեթէ բոլոր սկզբունքային հարցերում (պատերազմի եւ հաշտութեան, կամաւորական շարժման, Տաճկահայաստանի ինքնորոշման, Անդրկովկասի վարչական սահմանների բաժանման, Տրապիգոնի բանակցությունների[24], Անդրկովկասի անկախութեան եւն.) Մշակ-ը եւ ՅԺԿ-ն զննցել են Դաշնակցութեան հետ ու համերաշխուել նրան: Ուստի, եթէ քաղաքական այլ ինդիկներում սխալներ ու ճախողումներ են եղել, ապա դրանց պատասխանատուութիւնը հաւասարապէս պետք է կիսեր նաեւ ՀՀ Կուսակցութիւնը[25]:

Շար. 3

ՆՈՒԻՐԱՏՈՒՄԻՆ

Հայ Աւետ. Գուլեճի Դոկտ. Չաւեն Սարգիսեան Կրթական Ֆոնտին

27 Մայիս 2017-ին Հայ աւետ. գուլեճի հոգաբարձուքինը հաստատեց «ՀԱԳ-ի դոկտ. Չաւեն Սարգիսեան կրթական ֆոնտ»-ը, որ պիտի օգտագործուի դպրոցի յառաջդիմութեան ծրագիրներուն համար: Յարդ հետեւեալ նուիրատուութիւնները եղած են սոյն ֆոնտին.

Ամերիկեան տոլարով՝ Տիար Րաֆֆի Մանուկեան (Անգլիա) 50,000, Տիար Հրաչ Սիսեան (Ֆրանսա) 10,000, Տէր եւ Տիկ. Սեմիր եւ Վիլմա Էքմէքճի-Յերմեզ (Զուլայ) 5000, Էքմէքճի ընտանիք 5000, Սարգիս եւ Բիւզանդ Հասարճեան ընտանիքներ 5000, Տէր եւ Տիկ. Տէյվիտ եւ Մարկրէթ Սկրուպըլեան (ԱՄՆ) 5000, Օրդ. Մարի Լուիզ եւ Պր. Ռոպեր Մենեշեան (ԱՄՆ) 5000, Տէր եւ Տիկ. Յովիկ Զ. Զիրքեան (Սեուտական Արաբիա) 3000, Տէր եւ Տիկ. Յարութ Միսիրեան 2000, Տիար Վիգէն Գարճեան(ԱՄՆ) 1500, Տէր եւ Տիկ. Աւետիս Ե. Տեմիրճեան 1000, Տնօրէն եւ Տիկ. Րաֆֆի եւ Շողակ Յովհաննէսեան (ԱՄՆ) 1000, Տիար Սարգիս Պետեւեան (ԱՄՆ) 1000, Տիար Շահէ Խաչատուրեան 1000, Ստեփան Փիլիպոսեան Հիմնարկութիւն (ԱՄՆ) 1000, Վեր. Դոկտ. եւ Տիկ. Փոլ Հայտոսթեան 500, Տիկ. Սոսի եւ Պրն. Արմէն Պալեան 500, Տնօրէն եւ Տիկ. Պողոս Արթիսեան 500, Տէր եւ Տիկ. Արմէն եւ Միմի Յարութիւնեան 500, Տէր եւ Տիկ. Համբար եւ Սարգիս Եագուպեան (Գանատա) 500, Տիկ. Սոնա Թորոյեան (Իտալիա) 500, Տիար Ներսէ Տերմենճեան (ԱՄՆ) 500, Տիկ. Արփի Սարեան(ԱՄՆ) 500, Տէր եւ Տիկ. Չարեհ եւ Յասմիկ Մահսերճեան (ԱՄՆ) 500, Տիկ. Հիլտա Յարութիւնեան (ԱՄՆ) 500, Տիկ. Անայիս Պարսումեան (ԱՄՆ) 500, Տէր եւ Տիկ. Վարդգէս Աբելեան (ԱՄՆ) 500, Տիկ. Չենա Գասպարեան 500, Տիկ. Լենա Գիւլիանճեան (Անգլիա) 335, Տիար Ճորճ Տապալաղ(ԱՄՆ) 300, Տէր եւ Տիկ. Ասպետ եւ Անայիս Գրանեան (ԱՄՆ) 300, Տիար Յարութ Տէր Դաւիթեան (ԱՄՆ) 300, Տիար Ֆիլիպ Թրփանճեան (ԱՄՆ) 300, Տիկ. Սիլվա Թաշճեան (ԱՄՆ) 300, Տիար Փոլ Զարլոգեան (ԱՄՆ) 300, Տնօրէն Կեօնճեան (ԱՄՆ) 300, Տիար Չարմայր Սեդրակեան (ԱՄՆ) 250, մի ոմն 200, Տիկ. Սոնա Փանոսեան (Գանատա) 200, Տիկ. Անահիտ Փոլատեան 200,

Տիկ. Յասմիկ Հալեպլեան (ԱՄՆ) 200, Տնօրէն եւ Տիկ. Վիգէն եւ Սոսի Ահարոնեան (ԱՄՆ) 200, Տիար Րաֆֆի Արոշեան (ԱՄՆ) 200, Տէր եւ Տիկ. Շահէ եւ Լետա Գրագիրեան (ԱՄՆ) 200, Տիար Գեորգ Ճեպեճեան 200, Տէր եւ Տիկ. Մորիս եւ Պերճուհի Կիւլետեան (ԱՄՆ) 200, Տիկ. Արփի Սանտր (ԱՄՆ) 200, Վեր. եւ Տիկ. Հրայր Չոլագեան 150, Տիար Համբիկ Գեորգեան (Անգլիա) 150, մի ոմն 100, Տէր եւ Տիկ. Հայկ եւ Լենա Զիրքեան (Գանատա) 100, Տէր եւ Տիկ. Կարո Աւետեան 100, Տէր եւ Տիկ. Երանոշ Չեօրեքճեան 100, Տիկ. Երանուհի Չոլագեան 100, Տիկ. Սեդա Տէրեան (Գերմանիա) 100, Տիկ. Մարի Ադոյեան (ԱՄՆ) 100, Տիկ. Արեգ Մոմճեան 100, Տիկ. Անի Արոյեան (ԱՄՆ) 100, Տիկ. Անահիտ Մեյմարեան (ԱՄՆ) 100, Տիկ. Անի Իսկէնտերեան (ԱՄՆ) 100, Տիար Միքո Տոնապետեան (Արաբ. Էմիրթ.) 100, Տիկ. Սոնա Մատենլեան (ԱՄՆ) 100, Տիար Յովիկ Ստեփանեան (Հայաստան) 100, Տիկ. Շուշան Սամման (ԱՄՆ) 100, Տիար Մայք Տիշաքճեան 100, Տիկ. Լենա Գալայճեան (ԱՄՆ) 100, Տիկ. Յերա Տիպ (ԱՄՆ) 100, Ճորճ Կեպեշեան (ԱՄՆ) 100, Տիկ. Յերա Պոյաճեան (ԱՄՆ) 100, Տիար Պետիկ Գահվեճեան (Գանատա) 92, Տիկ. Մելինե Միրճանեան (ԱՄՆ) 50 .

Լիբ. ոսկիով՝ Անդրանիկ, Նելլի եւ Վաչէ Այվազեան 1,500,000, Տէր եւ Տիկ. Նապիլ Էքմէքճի 1,000,000, Տէր եւ Տիկ. Մկրտիչ Յ. Պուլտուրեան 1,000,000, Տէր եւ Տիկ. Ֆրէտի Էքմէքճի 750,000, Տէր եւ Տիկ. Գեորգ եւ Նորա Գեորգեան 500,000, Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Լարա Գեորգեան 500,000, Տնօրէն եւ Տիկ. Րաֆֆի Էլմաճեան 400,000, Տէր եւ Տիկ. Հրաչ Թոքաթլեան 300,000, Տէր եւ Տիկ. Ուիսամ եւ Վերա Հատատատ 300,000, Վիգէն Սողոմոնեան 300,000, Արա Կեօքլեօգեան 300,000, Տէր եւ Տիկ. Սեպուհ եւ Ռոզի Գագանճեան 200,000, Օրդ. Անի Էլմաճեան 200,000, Օրդ. Փոլին Սադրեան 200,000, Տէր եւ Տիկ. Ճոնի եւ Սիլվա Սայիլեան 200,000, Տիկ. Վիլմա Սեքիլեան 200,000, Տիար Սարգիս Վահրատեան 200,000, Դոկտ. եւ Տիկ. Արմէն Իւրնէշլեան 150,00, Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Հուրի Գասպարեան 150,000, Դոկտ. եւ Տիկ. Նատր եւ Լիզա Նասիֆ 100,000, Տիկ. Լորիս Տոնա-

ՄԱՅԱԶԴ

Տէր եւ Տիկ. Ֆատի եւ Սիլվիա Ասատ եւ Գաւակները՝ Մարք-Ֆիլիպ եւ Ալեքսանտր (Ապու Տապի) Տիար Հայկ Մելքիսեթեան (ԱՄՆ) Տիար Արա Մելքիսեթեան Տէր եւ Տիկ. Հրանդ եւ Պերճուհի Չավազաճեան եւ ընտանիք Դոկտ. եւ Տիկ. Փոլ Կարմիրեան եւ ընտանիք (ԱՄՆ) Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Սոնիա Չավազաճեան եւ ընտանիք Տիար Ասատուր Կարմիրեան (ԱՄՆ) Ինչպէս նաեւ Մելքիսեթեան, Ասատ, Կարմիրեան, եւ Չավազաճեան ընտանիքներ ու համայն ազգականներ կը գումար իրենց մօր, աներմօր, մեծմօր, քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ԹԱԳՈՒՅԻ (ՌԵՆ) ՄԵԼՔԻՍԵԹԵԱՆԻ (Ճնեալ՝ Կարմիրեան)

Մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 7 Յուլիս 2018-ին, Ուաշինկթընի մէջ (ԱՄՆ) : Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ 13 Յուլիս 2018-ին, Ուաշինկթընի Սբ. Մաթէոս Առաքեալ Մայր Եկեղեցին մէջ: Պէտք ունի մէջ ցաւակցութիւնները պիտի ընդունուին աւելի ուշ թուականի, յետ յուղարկաւորութեան:

պետեան 100,000, Օրդ. Մարիա Սեքիլեան 100,000, Օրդ. Սոնիա Սիւլեան 100,000, Տէր եւ Տիկ. Միքրան Դորոգորեան 50,000, Տիկ. Աննա Պաղտասարեան 50,000, Տէր եւ Տիկ. Րաֆֆի եւ Փառանձեմ Տեմիրճեան 50,000, Տէր եւ Տիկ. Սարգիս Չուրնաճեան (Աւստրալիա) 50,000:

Տեսակետ Հայաստանը

Էջ 03 Նշանակելու վերաբերեալ՝ ըսելով, որ անոնց մէջ կան հակառուս տարրեր եւ լրիւ արեւմտամետ գործիչներ: Նոր փորձութեան մը դիմաց կանգնած է Փաշինեան յաջորդ շաբաթ, երբ այցելէ Պրիւքսել եւ կնքէ Հայաստան-ԵՄ պայմանագիրը: Կը նախատեսուի, որ Փաշինեան ցանկալի հիւր կ'ըլլայ նաեւ ուրիշ գագաթաժողովի, որ Է՝ ՆԱԹՕ-ի գագաթաժողովը: Այդտեղ պիտի քննարկուին Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշումը եւ Դրիմի հարցը: Ինչ պիտի ըլլայ Հայաստանի դիրքորոշումը այս կարեւոր ժողովին եւ ինչպէս պիտի քուէարկէ Հայաստանը Ռուսաստանին ու Դրիմին կապուող հարցերուն վերաբերեալ: Յիշեցնենք, որ Հայաստանը կը մասնակցի ՆԱԹՕ-ի որոշ ծրագիրներուն՝ խաղաղապահ ջոկատներ տրամադրելով եւ «գործակցութեան» այլ ոլորտներու մէջ: Այս ամէնուն ի տես՝ Ռուսաստանը արդէն անթաքոյց ու յստակ պատգամ կը յղէ Հայաստանին՝

փորձելով ճնշում բանեցնել Հայաստանի նոր իշխանութիւններուն վրայ՝ հեռու մնալու Ռուսաստանը անհանգստացնող խնդրայարոյց հարցերէն: Այդ ճնշումներէն են... - Ռուսաստանի տումայի-խորհրդարանի-խօսակի ազդաւորմանամետ արտայայտութիւնը՝ Արցախեան հարցի լուծման գծով: Ի հարկէ, Հայաստանի մէջ հակադարձութիւններէ ետք եւ Հայաստանի հարցումներուն ի պատասխան՝ ռուսական կողմը ըսաւ, որ այդ արտայայտութիւնը Ռուսաստանի պաշտօնական դիրքորոշումը չէ: Բայց... - Համարեա միաժամանակ, Ռուսաստանէն խորհրդարանական երկու բարձրաստիճան պատկերակութիւններ եղան Նախիջեւանի ազդաւորման կողմէն ետք կորսնցուցած տարածքներուն մէջ, եւ այդտեղ ալ ունեցան ազդաւորմանամետ մի քանի արտայայտութիւններ:

- Երբ կ'ուզեն սրուիլ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ յարաբերութիւնները, Հայաստանի բեռնատար մեքենաներուն դիմաց անպայման կը փակուի Վրաստան-Ռուսաստան սահմանային անցակետը: Արդէն քանի մի օրէ բեռնատար մեքենաներու կուտակումներ կան այդ սահմանին, եւ այսօրուան լուրերուն մէջ նշուեցաւ, որ հերթը քիլոմետրեր դարձած է: Բեռնատարները իրենց բողոքը կը յայտնեն, բայց այդ սահմանակետը այդպէս ալ մինչեւ այսօր փակ մնացած է: Կան եւ ուրիշ կարեւոր զարգացումներ: Եզրակացնենք- Փաշինեանը լուրջ փորձութեան դիմաց կանգնած է թէ՛ ներքին, թէ՛ արտաքին քաղաքականութեան առումով: Սպասենք քիչ մըն ալ, ու ամէն ինչ պարզ կը դառնայ: Բնագիրը՝ Արեւելահայերէն Արեւմտահայերէնի վերածեց՝ ՅԱՐՈՒԹ ԿԻԼԻՒՅԵԱՆ

Միջազգային Լուրեր

Ազրայեյճանի Մէջ Կը Ճարուակէն Զետապնդել Իրենց Ազատ Խօսքի Իրաւունքը Իրացնող Օգտատէրերուն

Ազրայեյճանի իշխանութիւնները կը շարունակեն հետապնդել այն անհատներուն, որոնք, օգտուելով իրենց ազատ խօսքի իրացման իրաւունքէն, ընկերային ցանցերու վրայ գրառումներ կը կատարեն, որոնք թէեւ ճիշդ եւ առարկայական են, սակայն բացայայտօրէն կը հակասեն իշխանութիւններու տեսակետին:

Այս մասին, ինչպէս կը հաղորդէ «Արմէնփրէս»-ը, կը յայտնէ ազրայեյճանական «Թուրան» լրատուական գործակալութիւնը:

Ազրայեյճանի մէջ 14 անձ դատապարտուած է վարչական կալանքի, իսկ 3 անձի նկատմամբ յարուցուած է քրեական գործ: Այս ամէնուն համար պատճառ հանդիսացած է այն հանգամանքը, որ օգտատէրերը, անդրադառնալով Ազրայեյճանի մէջ վերջին շաբաթներու ընթացքին ծայր առած ուժանիւթի ճգնաժամին եւ Կիանճայի քաղաքացիներու Վելիելի նկատմամբ մահափորձին, ընկերային ցանցերու վրայ յայտնած են իրենց տեսակետը, ինչ որ իշխանութիւններուն եւ իրաւապահ մարմիններուն կողմէ որակուած է որպէս «ապօրինի կոչեր»:

Լիբանանէան Լուրեր

Էջ 01

Յարիրի Կոչ Կ'ընէ Նոր Կառավարութեան Կազմաւորման Գործընթացը Խթանելու



Վարչապետի պաշտօնակատար Սաատ Յարիրի Երեքշաբթի յետմիջօրէին կոչ ուղղեց քաղաքական կուսակցութիւններուն լաւագոյնս կատարելու իրենց պարտականութիւնները կառավարութեան կազմաւորման գործին մէջ:

Խորհրդարանի խօսնակ Նապիհ Պըրրիի հետ վերջինիս Այն Ալ Թինէի նստավայրին մէջ ունեցած հանդիպումէն ետք Յարիրի դիտել տուաւ, որ տարածաշրջանային եւ տնտեսական իրավիճակը կը պարտադրեն նախարարաց խորհուրդի շուտափոյթ կազմաւորումը:

«Անհրաժեշտ է խթանել կառավարութեան կազմաւորման ուղղութեամբ ներդրուած ջանքերը», - Յարիրի ըսաւ լրագրողներուն: «Բոլորը պէտք է գիտնան, որ սա՛ է գլխաւոր նպատակը»: Այս տեսակետէն վարչապետը կարեւորեց բոլորի միահամուռ եւ անշահախնդիր աշխատանքն ու զոհաբերութիւնը՝ յանուն երկրի բարգաւաճման:

Լիբանանէան Ուժերը Կը Խնդրէ Պաշտօնատարներէն Զարձագանգել Յարձակումներու

Լիբանանէան ուժեր կուսակցութիւնը շրջաբերագիր շրջանառեց իր նախկին եւ գործող նախարարներուն՝ խնդրելով չարձագանգել կուսակցութեան վրայ գործուած որեւէ յարձակումի:

Շրջաբերագիրը, ի դէպ, կը զուգահեյտի ԼՈ-ի եւ ԱԱԶ-ի միջեւ ոչ բարուք յարաբերութիւններու ժամանակահատուածի: Յայտնենք, որ երկու կուսակցութեանց զօրակիցները ընկերային ցանցի հարթակներուն վրայ գրառումներ կը կատարեն, ուր ԱԱԶ-ի զօրակիցները կ'օգտագործեն #Մաարապ դաւաճանեց Լիբանանին հաշթակը, իսկ միւս կողմէ՝ ԼՈ-ի համակիրները կ'արձագանգեն #Մաարապ Լիբանանը պաշտպանեց հաշթակով:



Վահան Թէքէան Միջնակարգ Վարժարան 2018-2019 Տարեշրջան

Վերամուտ

Պրէօվէ՝ Սեպտեմբեր 7

Նախակրթարան – Միջնակարգ՝ Սեպտեմբեր 24

Մանկապարտէզ՝ Սեպտեմբեր 25

Արձանագրութիւններ՝ Յուլիս ամսուն 3, 4, 11, 18 եւ 25, առաւօտեան ժամը 9:00-էն 1:00:

For more information: info@vahantekeyan.com 01 260 525 – 574



Or visit www.vahantekeyan.com

- ❖ Զանազան ուսուցման կէտրոններ (learning centers) մանկապարտէզէն ներս
- ❖ Արդի դաստիարակչական խաղաղվայրով օժտուած Մանկապարտէզ
- ❖ Գունազեղ Դասարաններ (Colorful Classrooms)
- ❖ Դաստիարակչական պտոյտներ (Educational Field Trips)
- ❖ Փոխ-գործօն (interactive) գրատախտակներով օժտուած դասարաններ
- ❖ Հայեցի ու ազգային դաստիարակութիւն
- ❖ Զանազան արտադասարանային գործունէութիւններ (All sorts of activities)
- ❖ Կեանքի հմտութիւններ (Life Skills)
- ❖ Օթոբարի սպասարկութիւն

Տնօրէնութիւն

Լրատուութեան Գործընկեր



Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Զետեւաբար՝ թերթիս մէջ իրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեանս տեսակետը: Կամքէ անկախ սպորդած վրիպակներու պարագային, կ'ապաւինիս յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:

